MIND THE STEP

Բիզնես ներկայացում

CiO LOGISTICS

Ընկերության մասին

CIO Logistics-ը միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող ընկերություն է, որն առաջարկում է պրոֆեսիոնալ լոգիստիկ լուծումների ամբողջական փաթեթ:

Մեր հիմնական մասնագիտացումը բեռների փոխադրումն է օդային, ցամաքային և ծովային տրանսպորտով:

Հիմնվելով մեր ռազմավարական գործընկերների վրա, մենք երաշխավորում ենք արագ և հուսալի առաքում:

Ավելի քան **25.000** տոննա/տարի (ընդհանուր բեռնաշրջանառություն)

30 միավոր փոխադրամիջոց ավտոպարկում, որից **12** -ը **էլեկտրոմոբիլ**

Ավելի քան **60** որակավորված մասնագետներ, որոնցից **2** -ը **DG** և **IATA** հավաստագրերի կրողներ են

Ավելի քան **110** գործընկերներ արտերկրում

Ավելի քան 8 տարվա փորձ

Միջազգային բեռնափոխադրումների ոլորտում բազմամյա փորձի շնորհիվ մենք մատուցում ենք բարձրորակ ծառայություն՝ հենվելով խորը գիտելիքների, նորարարությունների և ճկուն մոտեցման վրա:
Մեր փորձը ներառում է հաջող ծրագրեր հաճախորդների հետ ամբողջ աշխարհում, որտեղ մենք ցույց են տվել բարձր արդյունավետություն, և երաշխավորել անվտանգությունն ու հուսալիությունը փոխադրման յուրաքանչյուր փուլում:

Բարձր որակավորում ունեցող մասնագետներ

Միջազգային բեռնափոխադրումների ոլորտում մեր հաջողությունը պայմանավորված է բարձր որակավորում, խորը գիտելիքներ և փորձ ունեցող մասնագետների թիմով: Մենք մշտապես կատարելագործում ենք մեր հմտությունները, որպեսզի արագ արձագանքենք ոլորտի փոփոխություններին և հաճախորդներին տրամադրենք լավագույն լուծումներ:

Լոգիստիկա և փաստաթղթեր

Ապահովում ենք պրոֆեսիոնալ լոգիստիկ ծառայությունների ամբողջական փաթեթ և օպերատիվ պատրաստում անհրաժեշտ փաստաթղթեր ինչպես ներքին, այնպես էլ միջազգային փոխադրումների համար:

Մուլտիմոդալ փոխադրումներ

Մեկ միասնական համակարգի մեջ մենք ինտեգրում ենք տրանսպորտի տարբեր տեսակներ՝ օդային, ծովային, ցամաքային, ապահովելով ճկունություն և արդյունավետություն: Այս նորարարական մոտեցումը ոչ միայն կրճատում է ֆինանսական ծախսերը, այլև ապահովում է բեռների արագ փոխադրում աշխարհի ցանկացած կետ:

Անվտանգություն և հուսալիություն

Ձեր բեռի անվտանգությունը մեր առաջնահերթությունն է: Մենք խստորեն հետևում ենք անվտանգության ոլորտում ամենաբարձր չափանիշներին՝ երաշխավորելով բեռների ամբողջական պաշտպանությունը փոխադրման բոլոր փուլերում:

Էկո լուծումներ

Մեր ընկերությունն ակտիվորեն անցնում է լոգիստիկայի ոլորտում էկո լուծումների՝ իր ավտոպարկում ավելացնելով 12 ժամանակակից բեռնափոխադրող էլեկտրամոբիլներ՝ այդպիսով արդյունավետորեն նվազեցնելով վնասակար արտանետումները մթնոլորտ:

Մեր գործունեության աշխարհագրությունը

CIO Logistics ընկերությունը ընդլայնում է
իր ներկայությունը համաշխարհային շուկայում



Մատուցվող ծառայություններ

- **Օդային բեռնափոխադրումներ**
- **Ծովային բեռնափոխադրումներ**
- **Ցամաքային բեռփոխադրումներ**

- հավաքական փոխադրումներ
- մուլտիմոդալ փոխադրումներ
- վտանգավոր ապրանքների բեռնափոխադրում
- ծանրաքաշ և մեծածավալ բեռների փոխադրում
- պահեստավորում
- բեռների ապահովագրություն
- մաքսային ձևակերպում
- բրոքերային ծառայություններ
- խորհրդատվություն լոգիստիկայի և բեռնափոխադրումների վերաբերյալ

Օդային բեռնափոխադրումներ

Ժամանակակից օդանավերը ապահովում են ցանկացած քաշի և չափի բեռների փոխադրում: Օդային բեռնափոխադրումների առավելություններն են արագ առաքում, լայն աշխարհագրություն և նվազագույն ռիսկեր:

CIO Logistics-ը, միջազգային առաջատար ավիաընկերությունների հետ արդյունավետ համագործակցության շնորհիվ, առաջարկում է մատչելի գներ և սպասարկման բարձր մակարդակ:

Ընտրելով մեզ, դուք ընտրում եք գերազանցություն ավիափոխադրումների յուրաքանչյուր փուլում:

- Առաքում ենք ցանկացած տեսակի բեռ ամբողջ աշխարհում
- Բեռների չարտերներ
- Դռնից դուռ



Ցամաքային բեռնափոխադրումներ

Ցամաքային բեռնափոխադրումները տրանսպորտային ոլորտում շարունակում են մնալ առաջատարը: Ավտոտրանսպորտն ապահովում է ճկուն երթուղիներ, ցանկացած բեռների փոխադրում: Ժամանակակից բեռնատար մեքենաներն ունակ են տեղափոխել բոլոր տեսակի և ծավալների բեռներ, ներառյալ վտանգավոր և ոչ գաբարիտային բեռներ:

CIO Logistics ընկերությունը հանդիսանում է բեռների ցամաքային փոխադրումների կազմակերպման փորձագետ՝ ապահովելով անվտանգությունն ու արդյունավետությունը յուրաքանչյուր առաքման ժամանակ: Մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում յուրաքանչյուր բեռի անհատական հատկանիշներին:

Մեր բարձր որակավորում ունեցող մասնագետները մշակում են օպտիմալ երթուղիներ, պատրաստում են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և երաշխավորում բեռների առաքումը հաճախորդի հետ համաձայնեցված վայր և ժամին:

Ծովային փոխադրումներ

Ծովային տրանսպորտն առանձնանում է իր երկար հեռավորության վրա ծախսարդյունավետությամբ, ինչը միջազգային առևտրում պահանջված է դարձնում փոխադրումները: Նավահանգստում բեռնման և բեռնաթափման գործընթացը խստորեն վերահսկվում է, ինչը կարևորում է կոնտեյներային բեռնափոխադրումների հուսալիությունը: Ծովային տրանսպորտով կարելի է ապահով տեղափոխել տարբեր բեռներ, այդ թվում՝ մեծածավալ և մեծաքանակ բեռներ:

Ծովային գծերի և նավահանգիստների հետ համագործակցության բազմամյա փորձ ունեցող CIO Logistics ընկերությունը երաշխավորում է առաքման ժամկետների ճշգրտությունն ու պահպանումը՝ ապահովելով հաճախորդների սպասարկման բարձր մակարդակ՝ անկախ փոխադրման աշխարհագրությունից:



Լիցենզիաներ և հավաստագրեր

Մեր հաճախորդները և գործընկերները

Schneider Electric	MAIN SYSTEMS MS МЭЙН СИСТЕМС	MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA	mobile centre
ГАЗПРОМ	METAL GROUP	CANALI 1934	SAS SUPERMARKET
Yeremyan projects	M GROUP	MEGA Food	intimissimi
BARSIS LLC	WILDBERRIES	OZON	ADAMIUM ԱԴԱՄԻՈՒՄ
Эйртранс	AMA compressor	ЭЛЬDORADO	CALZEDONIA

Մենք մշտապես բացահայտում ենք արդյունավետ համագործակցության նոր հեռանկարներ:

Ձեզ անհրաժե՞շտ է բեռների արագ առաքում օպտիմալ ժամկետներում:

Կապվեք մեզ հետ՝ ձեր առաքման լավագույն երթուղին գտնելու համար: Մեր մասնագետները կձևակերպեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և կտրամադրեն հարակից ծառայությունների ամբողջական փաթեթ:

Ընտրելով մեր ընկերությանը Դուք ոչ միայն կստանաք անհամեմատ մատչելի գներ, բարձրորակ սպասարկում՝ խնայելով ժամանակ, ֆինանսներ,այլ նաև կաջակցեք շրջակա միջավայրի աղտոտվածությունը նվազեցնելուն ուղղված գործին:



+374 11 212 212 +374 95 211 121 www.ciologistics.com
info@ciologistics.com Nairi Zaryan str., 22A bld. Yerevan 0051 Armenia